ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ

МАРЗПЕТ АРАРАТА

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 03

<19> 01 2015թ.

ք. Արտաշատ

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՈՒՄ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻՑ 1999 ԹՎԱԿԱՆԻՆ ԾՆՎԱԾ ՊԱՏԱՆԻՆԵՐԻ ԿՑԱԳՐՈՒՄ ԵՎ ԲԺՇԿԱԿԱՆ ՍՏՈՒԳՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով "Զինապարտության մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6, 1.24 կետերով՝

Որոշում եմ.

1. Արարատի մարզում 1999 թ. ծնված պատանիների կցագրման և բժշկական ստուգման աշխատանքները տարածքային զինկոմիսարիատներում անցկացնել 2015թ. հունվարից մինչև դեկտեմբերի 30-ը:

2. Կցագրման և բժշկական ստուգման աշխատանքները կազմակերպված և ժամանակին անցկացնելու նպատակով առաջարկել համայնքների ղեկավարներին, ուսումնական հաստատությունների և հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններին՝ նախապատրաստել և կցագրման ենթակա պատանիների անհրաժեշտ փաստաթղթերը հանձնել համապատասխան տարածքային զինկոմիսարիատներ, ապահովել 1999թ. ծնված պատանիների ներկայանալը կցագրման տեղամաս:

3. Արտաշատի, Արարատի և Մասիսի տարածաշրջանների զինկոմիսարներին՝

1/ 1999 թ. ծնված պատանիների կցագրման աշխատանքներն իրականացնել սահմանված կարգով: Կցագրման ցուցակներում ընդգրկել ավագ տարիքի այն քաղաքացիներին, որոնք

2/ մշակել կցագրման համար անհրաժեշտ միջոցառումների պլանները, կցագրման ընթացքի և ավարտի մասին տեղեկատվություն ներկայացնել մարզպետարան:

4. Կցագրումը կազմակերպված անցկացնելու նպատակով առաջարկել ՀՀ Ոստիկանության Արարատի մարզային վարչությանը՝

1/ կազմակերպել զինվորական հաշվառումից խուսափողների որոնում և ապահովել նրանց ներկայությունը կցագրման տեղամասեր

2/ապահովել հասարակական կարգի պահպանումը կցագրման տեղմասերում:

5. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչությանը՝

1/ կցագրման ընթացքում պատանիների բժշկական ստուգումն իրականացնել մասնագետ բժիշկներից կազմված հանձնաժողովներով /ըստ տարածաշրջանների/

2/կցագրման տեղամասն ապահովել անհրաժեշտ բժշկական սարքավորումներով և դեղամիջոցներով

3/կազմակերպել կցագրման և բժշկական ստուգման ենթակա պատանիների բժշկական զննումը, լաբորատոր-ախտորոշիչ և հիվանդանոցային հետազոտությունն ու բուժումը:

6. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը և դպրոցի տնօրեններին՝

1/զինկոմիսարիատների կողմից ներկայացված ժամկետում ապահովել պատանիների ներկայանալը կցագրման տեղամաս,

2/պատանիների կցագրման ընթացքում գործող օրենսդրության վերաբերյալ ացատրական աշխատանքներ տանելու նպատակով կցագրման տեղամաս գործուղել մեթոդիստների:

7. Հանձնարարել մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության տրանսպորտի և ճանապարհաշինության բաժնին՝ ապահովել կցագրման և բժշկական ստուգման ենթակա պատանիների տրանսպորտային փոխադրումը կցագրման տեղամասեր:

8.Հաստատել ըստ տարածաշրջանների բժշկական հանձնաժողովների կազմերը՝ համաձայն թիվ 1, 2 և 3 հավելվածների:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված 1

ՀՀ Արարատի մարզպետի

2015 թ. հունվարի 19-ի N 23 որոշման

ԿԱԶՄ

ԱՐՏԱՇԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Ա. Մուրադյան – հանձնաժողովի նախագահ, Արտաշատի զինվորական կոմիսար
2. Ա. Ղազարյան – ավագ բժիշկ, թերապևտ
3. Ն. Մինասյան – հոգեբույժ
4. Հ. Ավետիսյան – քիթ, կոկորդ,ականջաբան
5. Ս. Թադևոսյան – սրտաբան
6. Մ. Մնացականյան – նյարդաբան
7. Ռ. Սաֆարյան - մաշկավեներաբան
8. Գ. Գրիգորյան – վիրաբույժ
9. Լ. Հախնազարյան --- ակնաբույժ
10. Լ. Ավետիսյան – բուժքույր
11. Ի. Կարապետյան – հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 2

ՀՀ Արարատի մարզպետի

2015թ. հունվարի 19 № 3 որոշման

ԿԱԶՄ

ԱՐԱՐԱՏԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Գ. Ավոյան – հանձնաժողովի նախագահ,Արարատի զինվորական կոմիսարի ժ/պ,
2. Ա. Մկրտչյան-- ավագ բժիշկ, վիրաբույժ
3. Ա. Գրիգորյան – թերապևտ
4. Գ. Միրզոյան- նյարդաբան
5. Գ. Ստեփանյան– քիթ, կոկորդ, ականջաբան
6. Ն. Կարապետյան - սրտաբան
7. Ն. Սարգսյան – մաշկավեներաբան
8. Ա.Գալստյան - ակնաբույժ
10. Գ. Միրզոյան – հոգեբույժ
11. Օ. Բաբայան – բուժքույր
12. Գ. Մարգարյան – հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված 3

ՀՀ Արարատի մարզպետի

2015 թ հունվարի 19 № 3 որոշման

ԿԱԶՄ

ՄԱՍԻՍԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Գ. Մանուկյան – հանձնաժողովի նախագահ,Մասիսի զինվորական կոմիսար,
2. Ա. Մամյան– ավագ բժիշկ, վիրաբույժ
3. Ն. Հարությունյան – թերապևտ
4. Բ. Խաչատրյան –նյարդաբան
5. Գ. Վարդանյան– հոգեբույժ
6. Ս. Նավասարդյան – քիթ, կոկորդ, ականջաբան
7. Լ. Սարգսյան – ակնաբույժ
8. Հ. Այդինյան - սրտաբան
9. Ս. Պողոսյան – մաշկավեներաբան
10. Ա. Հարությունյան – բուժքույր
11. Գ. Սարգսյան – հանձնաժողովի քարտուղար

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.ՄԱՐԳԱՐՅԱՆ